


Այս տեսակաւառակը կը ձօնուի նահատակ բանաստեղծ Ռուբէն Սեւակի եւ 1915 թուականի Հայոց Յեղասպանութեան զոհ զացած բոլոր հայ մտաւորականներու նահատակութեան 95-ամեակին Ռուբէն Սեւակի Յիշատակի Տան Կողմէ



ÇANKIRI
Nüfus: 62600
Rakim: 750

AYAS
BELED

ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

15 Սեպտեմբեր 2006

դէպի

ԶԱՆԴԸՐԸ ԵՒ ԱՅԱՇ

Pèlerinage du 15/09/2006 à CANKIRI et AYAS

Յարգանքի այցելութիւն 24 Ապրիլ 1915 ի
Հայ Մտաւորականներու Աքսորուած եւ
Նահատակուած Կեդրոնները

Ուխտագնացներ՝

Արմէն Արոյեան - Սարգիս Մերոյքեան

Պայծար Կարդանեան

ՆԱՅԻՐԻ

NAÏRI

ՔԻԻ 270 ԵՐԵՎԱՆԻՔԻ 24 ԱՊՐԻԼ 2007 (ԺԿ. ՏԱՐԻ) Կ-Վ (տարի 26 - 27-րդ ամս)

ՎԱՅԵ՛Լ Է ՀԱՅ ԱՂԳԻՆ...

ՀԱՅԵՐԸ (ԻՐԸ ԹԵ՛), ԱՄԵՆ ՏԱՐԻ, 24 ԱՊՐԻԼԸ
ԿԸ ՅԻԾԱՏԱԿԵՆ:

ԲԱՅՑ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ
ԻՆՉ ԸՆԼԱԸ ԱՄԵՆ ՈՔ ԼԱՐ ԳԻՏԵ՞

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.ԻՆ

ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՎ ՀԱՏԱԿՈՐԹԵՐԻՆ
ՎԱՅԹԵՐՈՒՆ՝ ՉԱՆՂԸՐԸ-ԻՆ ԵՒ ԱՅԱԾ-ԻՆ
ՈՒՐ ԵՂԵՐԹԵՆՈՒՆ ՀԱՅԵՐՈՒՆ ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ,
ՇԱՏ ՀԱԽԱՆԱԲԱՐ, ՏԵՂԵԱԿ ԹԵՆ

ԵՂԵՆԻ ՏԱՐԻՆԵՐԸՆ ՅԵՏՈՅ՝ ՄԻՆՉԵՐ
ԱՅՍՈՐ ՈՉ ՄԵԿ ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՆ ՉԱՆՂԸՐԸ ԵՒ
ԱՅԱԾ ԳԱՅԱԾ ԵՒ ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐՈՒՆ
ԱՆՅԱՅՑ ԳԵՐԵՋՄԱՆՆԵՐԸ ԵՂՈՂ ԱՅՂ ՀՈՒՆԵՐՈՒՆ
ՎՐԱՑ ՀՈԳԵՀԱՆՆԳԻՍՏ ՄԸ ԿԱՏԱՐԱԾ Է

ՄԻՆՉՈՒՆ ՀՐԵԱՆԵՐԸ՝ ԻՐԵՆՑ
«HOLOCAUST»-ԻՆ ՎԱՅԹԵՐԸ ԵՂՈՂ AUSCHWITZ-Ը,
DACHAU-Ն BUCHENWALD-Ը ԵՒ ԵՄԱՆ CAMP DE
CONCENTRATION-ՆԵՐԸ՝ ՍՐԲԱՏԵՂԻՆԵՐՈՒ
ԿԵՐԱԾՈՍ ԵՆ

ԵՒ ԿԵՐՉԱՊԵ՛Ս...

24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի ՄԵԾ ԵՂԵՐՈՒՄԸ
ՅԻ ՏԱՐԻՆԵՐ ԹԵՏՈՅ,
15 ԱԵՂՏԵՄԲԵՐ 2006-Թ.ԻՆ
ՈՒՒՏԱԳՆԱԾՈՒԹԻՒՆ

ԶԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱԾ

ՅՈՒՀԱՆՆԵՍ ՉՈՒՄԿՐԵԱՆ
[ԿՐԵԹ ՈՒՐԹԵՆԵԱՆ]

Սեր այս գրութիւնը կը ձօնենք Արմէն Արոյեանից և իրեն ուղեցուց
երկու հայ ընկերներուն որոնք, Եղեռնէն յետոյ առաջին անգամ ըլլալով,
ուխտագնացութեամբ մեկնեցան Չանդըրը և Այաշ:




Տխրահռչակ
Չանդրըր-ի
մուտքը
ուղեցուցող
նշանակը:



Արմէն
Արոյեանին
դէպի
Չանդրըր
կատարած
ուխտագնա-
ցութիւնը
պատմող
DVD-ին
առաջին
տեսանկարը:




Չանդրըր՝
Ռուբէն
Սեւակի,
Դանիէլ
Վարուժանի
և իրենց
մտաւորական
ընկերներուն
վերջին ...
հանգրուանը:



Չանդրըր-ի
բարձունքին
վրայի
փլատակ
բերդէն՝
ուխտագնաց
Արմէն Արոյեան
կը դիտէ
արիւնաթաթախ
քաղաքը:



Ահա՛ փլատակ բերդէն հին և նոր Չանդըրը-ի տեսարանը:



Եւ ուխտագնաց Արմէն Արոյեան Չանդըրը-ի բարձունքին վրայ, հոգեհանգիստ մը կատարած ըլլալու երկիւղածութեամբ կը կարդայ՝ Չանդըրը նահատակուած Ռուբէն Սեւակի ուղղուած դամբանականը, որուն կը հետեւի նահատակ-հերոս բանաստեղծին «Սրինգ» քերթուածին ընթերցումը.—

ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ

Բուն անունով՝ Ռուբէն Չիլիկիւրեան: Ծնած է 1885-թ.ին, Սիլիվրի, բժշկութիւն ուսած՝ Լօզան, ապա աշխատած ու ստեղծագործած՝ Զուիցերիա և Պոլիս, ուր, 1915-ի Ապրիլ 24-ին ձերբակալուած է, հակառակ բանակի բժիշկի իր հանգամանքին, և խժոճութեամբ սպաննուած 200-է աւելի հայ մտաւորականներու հետ: Մեր նահատակ գրագէտներուն կրտսերագոյնը՝ Սեւակ, մեզի ժառանգ ձգած է «Սիրոյ Գիրքը», «Վերջին Հայերը», «Քառսը» և «Բժիշկին Գիրքէն Փրցուած Էջեր» երկերը:

Սիրո՛յ և յեղափոխաշունչ ապրումներու գրագէտ Ռուբէն Սեւակ, Թէև երիտասարդ, բայց կանոնիս հասկցար կեանքը և ըմբռնեցիր զայն, հասուն մարդու նման:

Տաղանդաւոր բժիշկ էիր, տարուած մարդասիրութեամբ, և իրաւամբ կիսած ու բաժնած դժբախտութիւնները՝ մարդ արարածին.

Դուն, որ արիութեամբ կը հակադրուէիր ամէ՛ն տեսակի անարդարութեան դէմ...: Այսօր քեզի կու գանք որ բերեմք մեր խո՛ր յարգանքը, մեր հիացումն ու սերը՝ քեզի հանդէպ, նահատակութեանդ վայրին, Չանդըրը-ի մէջ:

Դուն պարզ գրող մը չէիր, այլ՝ վաւերական բանաստեղծն ու արծակագիրը:

Դուն պարզ բժիշկ մը չէիր, այլ՝ նուիրեալ հասարակական գործիչը, որ 100 տարիէ ի վեր կը ներշնչէ մեր ժողովուրդի գրասէր սերունդները՝ հա՛շտ ապրելու իրենց ներքին անձին հետ, հանդուրժելու՝ միւսին և ընդունելու, սիրելու զայն:

Դուն, որ քու բժշկական դասախօսութիւններովդ լուսատրած էիր հազարաւորներու միտքն ու կեանքը և անսակարկ ու անմնացորդ նուիրուած ազգիդ՝ քու արուեստովդ, կարողութիւններովդ ու գիտելիքներովդ:

Ազնուագո՛յն երիտասարդ Ռուբէն Սեւակ՝ դուն քու երեսուն տարու դեռատի կեանքդ զոհեցիր «Հայ» ըլլալու «Անցերելի յանցանք»իդ համար, վաղաժամօրէն թաղելով ձիրքերդ և սերերդ:

Կը խոնարհի՛նք քու անմոռաց և խնկելի յիշատակին առաջ:

Յարգա՛նք քեզ...:

Ս Ր Ի Ն Գ

Ո՛վ խեղճ սրինգ, տարաբախտ ոստ,
Ան ո՞ր անգուլթ ձեռքն էր անտես,
Կամ ո՞ր կայծակն որոտընդոստ,
Որ խլեց, չորցուց բեզ ոսկրի պէս...


Մօտեցո՛ւր կուրծքդ համբոյրիս,
Թող օժեն վէրքդ արցունքներս,

Գիտեմ պիտի չդալարիս,
Բայց կեա՛նք փչեմ երակէդ ներս...

Ո՛վ իմ սրինգ, ո՛ստ երկնատուր,
Չորցած կուրծքիդ ես տամ հոգիս,
Ու դուն ե՛րգ տուր, դուն վերե՛լք տուր,
Երկինքներ տուր հիւանդ շունչիս...:



Արհւնոտ
Չանդըրը-էն
հիմ
տուներ:



Հաւանաբար,
այս տուներուն
մէջ
քանի
մը ամիս
բնակեցան
մեր
սուրբ
մտաւորական
նահատակները



Չանդըրը-ի մէջ հայ
ուղեւորը կը հարցնէ
զագրելի տեսքով
թուրքի մը.- Ո՞ւր է
Հայ եկեղեցին»:
«Սա փողոցին մէջն
էր, բայց հիմա
փլած է» կ'ըլլայ
պատասխանը: Այս
եկեղեցին մէջ է, որ
Կոմիտաս Վրդ. պա-
տարագեց, վերջին
անգամ, արտորեալ
մտաւորականներուն
համար:



Ո՛վ գիտէ...
թէ Չանդըրը-ի
այս տունը՝
1915-թ-ին
մեր սուրբ
նահատակներէն
որո՞նց վերջին
բնակարանը
եղած է:



Հին Չանդըրը-ն
և
իր նոր
բնակիչները:



Ո՛վ գիտէ...
մեր սուրբ
նահատակները
քանի, քանի՛
անգամ նայած
են
Չանդըրը-ի
այս
պատմական
աշտարակի
ժամացոյցին՝
ապագային
հայող
իրենց
յոյսերով և
մտահոգու-
թիւններով:



1915-թ.ին
այս
տուններուն մէջ
քանի մը ամիս
ապրած
մեր
սուրբ
նահատակ-
ներուն
տեղ,
այսօր հոն
կը բնակի
ջարդարար
թուրքին
տիպարը եղող
ծիւղ մը:




24 Ապրիլ
1915-թ.ին
հայ
մտաւորական-
ներուն
սպանդանոցը
եղած Այաշ-ի
մէջ,
այսօրուան
քաղաքապե-
տութեան ցու-
ցատախտակը:



Դահիճներու
քաղաք
Այաշ-էն
հին շէնք մը:



Դահիճներու քաղաք՝
Այաշ-ի հին
«ANAVATAN»
կուսակցութեան
կեդրոնը: Հայերէն
թարգմանութեամբ՝
«Մայր Հայրենիք»
կոչուող այս
կուսակցութեան
անդամներուն մայր
հայրենիքը ո՞ր է
արդեօք—«Միջին Ասիոյ
տափաստանները»—:




Ցեղասպան
թուրքին
խորհրդանիշը
եղող
Այազ-ի
հին
թաղամասին
տիրապուշ
«Մինարե»ն:




Դահին քաղաք
Այազ-ի մէջ,
հին և նոր
շէնքեր
քով-քովի



Հին
Այազ-էն...
հին շէնքեր



Հին
Այազ-էն...
հին շէնքեր



Դահլիճ քաղաք
Այաշ-էն
տեսարաններ:
Հայ աքորեալ
մտաւորական-
ները՝ այս
քաղաքին
փողոցներուն
մէջ պտըտելու
առիթ
չեն ունեցած:

**ՈՒՄՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ՝ ԴԵՊՈՒ 24 ԱՊՐԻԼ 1915-Թ.Ի
ՍՊԱՆԴԱՆՈՅԸ ԵՂԱԾ
ՉԱՆՂԸՐԸ ԵՒ ԱՅԱԾ:
Ո՞Վ Է ՈՒՄՏԱԳՆԱՅ ԱՐՄԷՆ ԱՐՈՅԵԱՆ**

Ասկէ տասը տարիներ առաջ էր. Լոզանի մէջ, ժընեւի Հոգետոր Հովիւ Դոկտ. Աբել Քահանայ Մանուկեան և գանատաբնակ Տիկ. Մարօ Մանաւեան մեզի նուիրեցին video-cassette մը, որուն վրայ մեր բուն հայրենիքը՝ Արեւմտեան Հայաստանը և թուրքերուն բարբարոսութիւններէն փրկուած, մեծ մասամբ կիսափրլատակ վիճակի մէջ եղող պատմական յուշարձանները դիտելու մեծ, բայց նաեւ տխրութեամբ պարուրուած հաճոյքը ունեցանք:

Տեսաերիզը պատրաստողը Լոս Անճելըս-աբնակ, նախկին Ճիպիւնցի ընտանիքի զաւակ՝ Արմէն Արոյեանն էր, որ ամէն տարի Ամերիկայէն դէպի Արեւմտեան Հայաստան ճամբորդութիւններ կը կազմակերպէր, որուն կը մասնակցէին կին եւ այր՝ շատ մը հայրենասէր հայեր: Եւ Արմէն Արոյեան այս ուղեւորութիւն-ուխտագնացութիւնները ինք կը նկարէր և կը ձայնագրէր:

Այս՝ դէպի մեր արմատները, դէպի մայր հայրենիք ճամբորդութիւններուն իբր ուղեցոյց, շատ անգամ կը մասնակցէին Մետրոպ Արք. Աշտեանի և Դոկտ. Հրանդ Մարգարեանի նման հմուտ անձնաւորութիւններ, որոնք իրենց տուած բացատրութիւններով աւելի կ'իմաստաւորէին ու կ'արժեւորէին այս բնոյթի ուխտագնացութիւնները...:

Այս տեսաերիզը սկզբնաւորութիւն մը եղաւ. և մենք կապ հաստատեցինք Լ. Անճելըս-աբնակ Արմէն Արոյեանի հետ:

Եւ ան մեզի ուղարկեց դէպի Արեւմտեան Հայաստան կատարած գրեթէ բոլոր ուխտագնացութիւններուն տեսաերիզները:

Եւ այս ձեւով, առանց Հայաստան երթալու, ճանչցանք մեր բուն հայրենիքը, անոր ամէն մէկ քաղաքը, գիւղը և ամէն մէկ սուրբ յուշարձանը:

Եւ այս տեսաերիզներով առիթ ունեցանք տեսնելու և մտիկ ընելու

այդ հողերուն վրայ ջարդերէն ճողոպրած տարեց հայերու խօսակցութիւնները:

Իրապէս ալ, մեր բարեկամին կատարածը՝ հայապահպանման օգտին եղած բացառիկ գործունէութիւն մըն էր: Անոր տեսաերիզները՝ Հայաստանի պատմական յուշարձանները ձեւով մը փրկեցին թուրքերուն կողմէ բոլորովին բնաջնջուելէ:

Եւ այդ վիտէօներու շնորհիւ հայկական պատմական յուշարձանները և վայրերը անմահացան:

Բայց այս բոլոր տեսաերիզներուն մէջ պակաս բան մը կար, որ երկար ատեն իվեր մեր միտքը կը չարչրկէր:

Ինչո՞ւ 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող Չանդըրը-ի և Այաշ-ի մասին, մինչեւ այսօր ոչ մէկ նկար, ոչ մէկ տեղեկութիւն և մանաւանդ՝ ոչ մէկ տեսաերիզ գոյութիւն ունեցած է:

Մինչդեռ հրեաները իրենց «HOLOCAUSTE»-ին կատարուած բոլոր վայրերը՝ AUSCHWITZ-ը, DACHAU-ն BUCHENWALD-ը և նման CAMP DE CONCENTRATION-ները սրբատեղիներու վերածած են:

Իսկ մենք Չանդըրը-ն և Այաշ-ը ոչ միայն սրբատեղիի վերածած չէինք, այլ՝ նոյնիսկ հայ կրօնական մը, մինչեւ այսօր, Չանդըրը և Այաշ չէ համարձակած երթալ և նահատակ մտաւորականներուն անյայտ գերեզմանոցը եղող այդ հողերուն վրայ աղօթք մը մըմնջել...:

Այս մտասելեռումներով դիմեցինք Արմէն Արոյեանին և իրմէ խնդրեցինք, որ իր ուխտագնացութիւնը ամբողջացնէ և մինչեւ հիմա ոչ մէկ կրօնականի և նաեւ աշխարհականի կողմէ չայցելուած, 24 Ապրիլ 1915-թ.ի սպանդանոցները եղող՝ Չանդըրը և Այաշ ուխտագնացութեան երթայ...:

Մեր ուղեգնաց ազգակիցը շատ ճիշդ գնահատելով այս ուխտագնացութեան կարեւորութիւնը՝ սիրով ընդունեց մեր առաջարկը...

Եւ 15 Սեպտեմբեր 2006-թ.ին, ինք և իր երկու հայ ուղեցոյցները ինքնաշարժով Պոլիսէն ճամբայ ելան դէպի առաջին սպանդանոց՝ Չանդըրը...

Չանդըրը-ի հին քաղաքը պտըտելէ և նկարահանելէ յետոյ, մեր ուխտագնաց, յանդուգն բարեկամը, իր երկու ուղեցոյցներով կը դիմեն Չանդըրը-ի բարձունքը գտնուող պատմական բերդը, ուրկէ ինք իր հայեացքը կ'ուղղէ դէպի վար, հին Չանդըրը-ի տնակ-բնակարանները, ուր քանի մը ամիս բնակած էին մեր նահատակ մտաւորականները: Եւ հոգեհանգիստ մը կատարելու ինքնամփոփումով և երկիրդածութեամբ կը կարդայ Չանդըրը-ի մէջ նահատակուած Ռուբէն Սեւակի մասին իր հոգեյոյզ դամբանականը և կ'ընթերցէ նոյնքան թախծալից մէկ քերթուածը հերոս-նահատակ բանաստեղծին:

Ուխտագնացները կը փնտռեն նաեւ երբեմնի Հայկ. եկեղեցին: «Հոս էր, այժմ քանդուած է»-կը պատասխանուի: Հոն էր, որ Կոմիտաս Վրդ., արտորէ վերադարձէ առաջ, պատարագած էր տարագիր հայ մտաւորականներուն համար, որոնց մասին Յովհան Ծ. Վ. Կարապետեան պիտի վկայէր յետագային... *Մատուռին դասին առջեւ ասպետական դիրքով կանգնած էր Տօթ. Չիլինկիրեան: Կը զգայի, թէ ինք, այդ վայրկեանին կը մարմնացներ մեր ցեղին հաւատքի դիւցազնութիւնը: Երկիրդի նշոյլը անգամ չկար իր առնական դէմքին արտայայտութեան մէջ: Սեւակ առնչիւնը եղաւ Ս. հաղորդութիւն ճաշակող: Չեմ կրնար մտքէս հեռացնել իր այդ օրուան գրաւիչ վեհութիւնը: Կը նմանէր յաղթական կաղնիին, որուն բունը տապալել կը պատրաստուէին փայտահատները...»:*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՉՆԱԿ» - 1922-թ.

**

Մեր ուխտաւոր հայրենակիցը և իր երկու հայ ուղեցոյցները, հոգեպէս շատ ընկճուած վիճակով կը բաժնուին Չանդըրը-էն և կ'երթան դէպի 24 Ապրիլ 1915-թ.ի երկրորդ սպանդանոցը եղող Այաշ քաղաքը...

Այաշ քարտուած հայ մտաւորականները այնտեղ շատ ծանր պայմաններու մէջ գտնուած էին, քանի որ, բոլորն ալ մնացին բանտարկուած: Իրենց արգիլած էին դուրս գալ: Եւ Այաշ քարտուած հայ մտաւորականներէն շատ քիչեր Պոլիս վերադարձան: Գրեթէ, բոլորն ալ, նահատակուեցան...

Եւ այս անիծեալ Այաշ-էն Արոյեան և իր ընկերները, ինքնաշարժով Պոլիս վերադարձի ճամբուն վրայ, ինքզինքնին շատ սիրելի անձի մը յուղարկաւորութենէն վերադարձողի հոգեվիճակի մէջ զգացեր են:

**

Մենք կը հաւատանք, որ Արմէնի և իր ընկերներուն Չանդըրը և Այաշ կատարած ուխտագնացութիւնը՝ պատմական բացառիկ ձեռնարկ մըն է...

Եւ մենք ունինք այսօր Չանդըրը-ի և Այաշ-ի սպանդանոցներու նկարները: Եւ ունինք մանաւանդ՝ այս ուխտագնացութիւնը յաւերժացնող տեսաւերիզը՝ DVD-ն:

Հազար շնորհակալութիւն՝ քեզի և ընկերներուդ՝

Սիրելի Արմէն Արոյեան:

Գիտակից հայ ժողովուրդը երախտապարտ է ձեզի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ
ԵՐԵՎԱՆԻ ՈՒՐԲԵՆԵԱՆ

ՌԻՏՏԱԳԼԱՅՈՒԹԵԼԵՆ
ՁԱՆԱԶԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

